Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի

2018 թվականի գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՇՈՒՇԻ
2019թ. մարտի 29

Բովանդակություն

Նախաբան 2

Բաժին 1. Արցախում մարդու իրավունքների պաշտպանության ամփոփ վիճակը և Պաշտպանի գործունեության ընդհանուր բնութագիրը 6

Գծապատկեր 1. Դիմումների քանակական պատկերն՝ ըստ դիմումատուների աշխարհագրության 9

Գծապատկեր 2. Դիմումատուների քանակական պատկերն՝ ըստ դիմումների բովանդակության 10

Բաժին 2. Պաշտպանի գործունեությունն՝ ըստ մարդու իրավունքների առանձին ոլորտների 13

2.1. Սոցիալական ապահովության իրավունք 13

2.2. Սեփականության իրավունք 16

2.3. Արդար դատաքննության իրավունք 18

2.4. Ազատ տեղաշարժի իրավունք 19

2.5. Աշխատանքային իրավունքներ 21

2.6. Պատշաճ վարչարարության իրավունք 22

2.7. Առողջության պահպանման իրավունք 23

2.8. Հավաքների ազատության իրավունք 23

2.9. Երեխաների իրավունքներ 24

2.10. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ 27

2.11. Այլ իրավունքներ 30

Բաժին 3. Պաշտպանի գործունեությունը հարկադիր պահման վայրերում .. 34

Բաժին 4. Պաշտպանի գործունեությունը հանրային իրազեկման ոլորտում 38

Բաժին 5. Պաշտպանի համագործակցությունը քաղաքացիական հասարակության հաստատությունների հետ 42

Բաժին 6. Պաշտպանի արտաքին փոխգործակցությունը 44

6.1. Համագործակցությունը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ 44

6.2. Համագործակցությունը Սփյուռքի կառույցների հետ 44

6.3. Միջազգային համագործակցությունը 45

Եզրափակիչ նկատառումներ 48

Նախաբան

Սույն հաղորդման մշակումը և ներկայացումը բխում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԱՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածում ամրագրված պահանջից, այն է՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ նաև Պաշտպան) Ազգային ժողով է ներկայացնում տարեկան հաղորդում՝ նախորդ տարվա իր գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Պաշտպանը հաղորդումը ներկայացնում է նաև պետական իրավասու մարմիններին ու հասարակական կազմակերպություններին և հրապարակում զանգվածային լրատվության միջոցներով:

Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները հաշվետու ժամանակահատվածում կատարել են Ռուբեն Մելիքյանը (մինչև 2018թ. հոկտեմբերի 3-ին հրաժարականի դիմում ներկայացնելը)[1] և Արտակ Բեգլարյանը (2018թ. հոկտեմբերի 31-ին Ազգային ժողովի կողմից այդ պաշտոնում ընտրվելուց հետո) [2]:

Հաղորդման մեջ ներկայացվող տեղեկությունների և վերլուծությունների համար աղբյուր են հանդիսացել՝

- Պաշտպանի աշխատակազմում (Այսուհետ՝ նաև Աշխատակազմ) ստացված դիմումները,
- Աշխատակազմում «116» համարով գործող թեժ գծին և այլ աշխատանքային հեռախոսահամարներին ստացված հեռախոսազանգերը,

1 ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Վաղաժամկետ դադարել են Արցախի Հանրապետության ՄԻՊ Ռուբեն Մելիքյանի լիազորությունները», 4 հոկտեմբերի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=123 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2018թ.):

2 Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական կայք, «Արցախի Հանրապետության Ազգային ժողովը հրավիրել է հերթական լիագումար նիստը», 31 հոկտեմբերի, 2018թ., հղում՝ http://www.nankr.am/hy/3021?fbclid=IwAR1gzVQx9IsEIuHSIKP_31hdqp3bgJrmsIDJTbIO98IbUIvoLjgbPZzYC58 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

- Աշխատակազմում կազմակերպված ընդունելությունների ու շրջանային այցերի ընթացքում Պաշտպանի և Աշխատակազմի ներկայացուցիչների շփումները քաղաքացիների հետ,
- Փակ և կիսափակ, ինչպես նաև պետական կառավարման ներքո գտնվող այլ հաստատություններ Պաշտպանի և Աշխատակազմի ներկայացուցիչների այցերի ընթացքում կատարված դիտարկման աշխատանքները,
- Պետական մարմինների ներկայացրած պարզաբանումները՝ դիմումներում ներկայացված փաստերի առնչությամբ,
- Դիմումների քննարկման, ինչպես նաև օրենսդրության կատարելագործմանն ուղղված գործառույթի շրջանակներում իրավական ակտերի վերլուծությունների արդյունքները,
- Բաց աղբյուրներում (զանգվածային լրատվության միջոցներ, սոցիալական ցանցեր և այլն) Պաշտպանի ուշադրությանը ներկայացված խնդիրները, ինչպես նաև բաց աղբյուրների մշտադիտարկման արդյունքները:

Հաղորդումը բաղկացած է նախաբանից, 6 բաժիններից և եզրափակիչ նկատառումներից: Որոշ բաժիններ իրենց հերթին բաժանվում են ենթաբաժինների: Յուրաքանչյուր բաժնի մասին մանրամասն ստորև՝

Բաժին 1

- Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունների ընդհանուր բնութագիր
- Դիմումների վիճակագրական վերլուծություն:

Բաժին 2

- Վերլուծություն՝ ըստ մարդու իրավունքների առանձին ոլորտների,
- Առկա խնդիրների վերացմանն ուղղված առաջարկների ներկայացում:

Բաժին 3

- Հարկադիր պահման վայրեր կատարած այցերի արդյունքներ,
- Հարկադիր պահման վայրերից ստացված դիմումների ընդհանուր վերլուծություն:

Բաժին 4

- Մարդու իրավունքների հանրային իրազեկմանն ուղղված հանդիպումներ, միջոցառումներ, ծրագրեր և այլն:

Բաժին 5

- Քաղաքացիական հասարակության հետ համագործակցության ուղղություններ՝ համատեղ միջոցառումներ, քննարկումներ և այլն:

Բաժին 6

- Համագործակցություն միջազգային կառույցների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Սփյուռքի հետ:

Բաժին 1. Արցախում մարդու իրավունքների պաշտպանության ամփոփ վիճակը և Պաշտպանի գործունեության ընդհանուր բնութագիրը

1.1. ԱՀ օրենսդրությունը Սահմանադրությանը համապատասխանեցնելու և ժամանակակից իրավունքի զարգացումներին արձագանքելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2017թ.դեկտեմբերի 21-ին ԱԺ կողմից ընդունվեց և 2018թ. փետրվարի 1-ից ուժի մեջ մտավ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԱՀ նոր օրենքը, որը մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելու և խոշտանգումների, վատ վերաբերմունքի դրսևորման մյուս ձևերի կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակ տվեց Պաշտպանի հաստատությանը:

Աշխատակազմը բաժանվեց կառուցվածքային երկու միավորի՝ դեպարտամենտի ու քարտուղարության: Դեպարտամենտը զբաղվում է Պաշտպանի գործունեության բովանդակային ապահովմամբ, իսկ քարտուղարությունը՝ տեխնիկական սպասարկմամբ:

1.2. Օրենքով նախատեսվեց Պաշտպանի հաստատության գործունեության կարգերի մշակում և ընդունում: Պաշտպանի հրամանով հաստատվեցին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցույթի անցկացման, թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցութային հանձնաժողովների ձևավորման, բողոքի ուսումնասիրության, անձնական գործերը վարելու կարգերը, ինչպես նաև վարքագծի ու ներքին կարգապահական կանոնները:

1.3. Որպես ԱՀ ՄԻՊ գործունեության կարևոր առաջնահերթություն՝ Պաշտպանը շարունակել և ավարտին է հասցրել 2016թ. մայիսի 11-ին սեփական նախաձեռնությամբ սկսած՝ ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի կողմից մարդու հիմնարար իրավունքների զանգվածային խախտումների, ներառյալ՝ զինծառայողների ու խաղաղ բնակիչների խոշտանգման դեպքերի վերաբերյալ հարցի քննարկումը: Այդ ընթացակարգի շրջանակներում իրականացված փաստահավաքության արդյունքում Պաշտպանը հավաքագրել է

Ադրբեջանում հայատյացության քաղաքականության բազմաթիվ դրսևորումներ: Նշյալ քննարկման ընթացակարգի ամփոփումը կատարվել է 2018թ. սեպտեմբերի 25-ին հրավիրված մամուլի ասուլիսով, որի ընթացքում Պաշտպանը ներկայացրել է «Հայատյացությունն Ադրբեջանում. կազմակերպված ատելության խոսքը և թշնամությունն ընդդեմ հայերի» խորագրով անգլերեն հատուկ զեկույցը[3]: Փաստաթուղթը մշակվել է Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի հետ համագործակցությամբ և առաջնակարգ փորձագետների ընդգրկմամբ՝ ներառելով և՛ փաստական տվյալներ, և՛ միջազգային իրավական վերլուծություն: Պաշտպանը զեկույցի մեջ արձանագրել է, որ Ադրբեջանում հայատյացությունը կրում է համակարգային և կազմակերպված բնույթ: Այն հանդիսանում է 2016թ. ապրիլին Ադրբեջանի կողմից իրականացված, ինչպես նաև բազմաթիվ այլ միանգամյա ու շարունակական մարդու հիմնարար իրավունքների զանգվածային խախտումների խորքային պատճառը:

1.4. Պաշտպանը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել հանրային հնչեղություն ունեցող դեպքերը՝ սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացակարգ սկսելու որոշումներ ընդունելով դրանց կապակցությամբ: Պաշտպանը սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացակարգ է սկսել, մասնավորապես, (1) մարտի 26-ին epress.am լրատվականով հրապարակված Ասյա Խաչատրյանի և ԱՀ ոստիկանության ծառայողների միջև տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ նյութի, (2) հունիսի 1-2-ի գիշերը սոցիալական մեդիայում տարածված՝ ԱՀ ԱԱԾ մի խումբ զինծառայողների և երկու այլ քաղաքացիների միջև տեղի ունեցած միջադեպի և (3) սեպտեմբերի 14-ին Ստեփանակերտ քաղաքի բնակիչ Սողոմոն Մելքումյանին բռնության ենթարկելու վերաբերյալ լրատվամիջոցներով տարածված տեղեկատվության փաստերով: Նշված երեք փաստերի առթիվ հարուցվել են քրեական գործեր (ընդ որում՝ առաջին փաստով՝ Պաշտպանի դիմումի հիման վրա):

---

3 ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, “Armenophobia in Azerbaijan: Organized Hate Speech and Animosity Towards Armenians,” 25 սեպտեմբերի, 2018թ., հղում՝ http://www.ombudsnkr.am/docs/Armenophobia-in-Azerbaijan-1.00-Interactive-25.09.2018.pdf (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

Բոլոր երեք վարույթներով Պաշտպանը պարբերաբար անհրաժեշտ տեղեկություններ է ստացել իրավասու մարմիններից:

1.5. Հաշվետու ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանին է ներկայացվել 138 դիմում 159 անձանց կողմից, որոնցից 78-ը գրավոր էր, իսկ 60-ը՝ բանավոր: Մանրամասները՝ գծանկարներ 1-ում և 2-ում՝ ըստ աշխարհագրական և բովանդակային չափորոշիչների:

Գծապատկեր 1. Դիմումների քանակական պատկերն՝ ըստ դիմումատուների աշխարհագրության



Գծապատկեր 2. Դիմումատուների քանակական պատկերն՝ ըստ դիմումների բովանդակության



1.6. Հաշվետու ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության աշխատակիցները Պաշտպանի հանձնարարությամբ պարբերաբար այցելել են փակ հիմնարկներ, այդ թվում՝ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով:

Այցերի ընթացքում աշխատակազմի աշխատակիցները խորհրդապահական (կոնֆիդենցիալ) կարգով տեսակցել և առանձնազրույցներ են ունեցել ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, լսել նրանց հուզող հարցերը, տվել անհրաժեշտ խորհրդատվություն, վերցրել և քննարկել նրանց կողմից ներկայացրած գրավոր դիմում բողոքները:

1.7. Կարևորելով մարդու իրավունքների կրթությունը և հանրային իրազեկումը հատկապես երիտասարդ սերնդի շրջանում՝ Պաշտպանի աշխատակազմը կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ լուսանկարների/տեսանյութերի մրցույթ, շրջանային հանդիպումներ, զրույցներ տարբեր ճամբարների մասնակիցների հետ:

1.8. Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանը շարունակել է սերտ համագործակցությունը քաղաքացիական հասարակության սուբյեկտների հետ՝ շեշտադրելով մարդու իրավունքների իրազեկման, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտային խնդիրները վերհանելու և դրանց համատեղ ջանքերով լուծում տալու ուղղությունները:

1.9. Պաշտպանը շարունակել է սերտ փոխգործակցությունը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ՝ ինչպես դիմումների քննարկման շրջանակներում, այնպես էլ փորձի փոխանակման ձևաչափով:

Սփյուռքի կազմակերպությունների հետ համագործակցությունը շարունակել է մնալ Պաշտպանի գործունեության առանցքում: Սերտ համագործակցություն է իրականացվել Ամերիկայի հայ իրավաբանական միության, ԱՄՆ և Եվրոպայի Հայ դատի գրասենյակների, Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանը պարբերաբար հանդիպումներ է ունեցել այլ երկրներից Արցախ ժամանած տարբեր միջազգային պատվիրակությունների հետ՝ ներկայացնելով իր գլխավորած հաստատության գործունեությունը և մարդու իրավունքների վիճակն Արցախում, ինչպես նաև պատվիրակությունների հետ քննարկել է համագործակցությանն առնչվող հարցեր:

Բաժին 2. Պաշտպանի գործունեությունն՝ ըստ մարդու իրավունքների առանձին ոլորտների

2.1. Սոցիալական ապահովության իրավունք

2.1.1. Պաշտպանը հաշվետու տարում ոլորտին առնչվող 26 դիմում է ստացել: Դիմումներն առնչվել են կենսաթոշակների ու պետական նպաստների տրամադրման, ինչպես նաև պետական ծրագրով որոշակի խումբ անձանց շինանյութի ձևով օժանդակության հատկացման, զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակարանների և անհատական տների վերանորոգման և մի շարք այլ հարցերի:

2.1.2. Քաղաքացին դիմելով Պաշտպանին հայտնել է, որ երկրորդ երեխայի ծնվելու կապակցությամբ Քաշաթաղի սոցիալական ապահովության բաժինը նշանակել է մինչև երկու տարեկան երեխայի խնամքի պետական նպաստ, սակայն նշանակելուց մեկ տարի անց նպաստի գումարի վճարումը դադարեցվել է:

Վերոգրյալի կապակցությամբ Պաշտպանը հարցում է կատարել ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն, որին ի պատասխան տեղեկացրել են, որ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում հաշվառված դիմումատուի 2-րդ երեխայի համար 2017թ. հունվարից նպաստի վճարումը դադարեցվել է բնակության վայրի և ընտանիքի կազմի մասին տեղեկանք չներկայացնելու պատճառով: ԱՀ Քաշաթաղի շրջանի առանձնահատկություններից ելնելով, 2006թ. վերահսկողության նպատակով յուրաքանչյուր տարի նպաստառուների կողմից Քաշաթաղի շրջվարչակազմի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն, իսկ 2018թ. հունվարից աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության Քաշաթաղի ՍԾՏԳ է ներկայացվում բնակության վայրի և ընտանիքի կազմի մասին տեղեկանք:

Սակայն ԼՂՀ կառավարության 2009թ. հունվարի 20-ի «Պետական նպաստների, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների մասին» թիվ 15-Ն որոշման 1-ին հավելվածով որևէ պահանջ սահմանված չէ նպաստառուի կողմից նույն որոշման նույն հավելվածի 10-րդ կետով պահանջվող

որևէ փաստաթուղթ՝ նպաստ նշանակելուց հետո յուրաքանչյուր տարի կամ լրացուցիչ ներկայացնելու վերաբերյալ: Հետևաբար, անձը, որոշակի փաստաթղթեր չներկայացնելու հիմնավորմամբ, նպաստից զրկվել է առանց իրավական հիմքի:

Պաշտպանի կայացրած որոշման հիման վրա և միջամտության արդյունքում քաղաքացուն վճարվել է 11 ամսվա չվճարված նպաստը, որը կազմել է 165,000 ՀՀ դրամ, իսկ պետական լիազոր մարմնին առաջարկվել է բարելավել խնդրին վերաբերող իրավակիրառ պրակտիկան: Մասնավորապես, հաշվի առնելով Պաշտպանին հասցեագրված մի շարք դիմումներում բարձրացված հարցերը՝ ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությանն առաջակվել է, հիմք ընդունելով ԱՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասը, միջոցներ ձեռնարկել Արցախից ՀՀ-ում մշտական բնակություն հաստատած նպաստառուների կողմից ո՛չ ԱՀ-ից և ո՛չ էլ ՀՀ-ից նպաստը չստանալու դեպքերը բացառելու ուղղությամբ:

2.1.3. Անձը դիմել էր Պաշտպանին, նշելով, որ Ստեփանակերտի քաղաքապետարանն իր բնակարանը հանել է հրետակոծությունից տուժած տների վերանորոգման հերթացուցակից: Ի պատասխան Պաշտպանի գրության՝ Ստեփանակերտի քաղաքապետը հայտնել է, որ բնակարանը Ստեփանակերտի քաղաքապետարանի՝ հրետակոծությունից տուժած տների վերանորոգման հերթացուցակից հանվել էր սխալմամբ, սակայն բնակարանի վերանորոգման աշխատանքները կիրականացվեն առաջնահերթության կարգով՝ նպատակային ֆինանսավորման առկայության դեպքում: Պաշտպանի միջամտության արդյունքում քաղաքացու անունը վերստին ավելացվել է հերթացուցակում:

2.1.4. Հաշվետու տարում ստացված մի շարք դիմումներով քաղաքացիները պնդում էին, որ համապատասխան սոցիալական բաժնի աշխատակիցն իրենց չի տեղեկացրել լրացուցիչ նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին, որոնց չներկայացնելու հետևանքով իրենք զրկվել են նպաստ ստանալու իրավունքից: Վերոգրյալի կապակցությամբ Պաշտպանն ԱՀ աշխատանքի,

սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն առաջարկներ է ներկայացրել, մասնավորապես՝

1) մշակել և իրականացնել նպաստների նշանակման համար դիմած քաղաքացիների ընդունելության պատշաճ կարգ:

2) կազմել պահանջվող հիմնական և լրացուցիչ փաստաթղթերի ամբողջական ցանկ, որը գրավոր կներկայացվի նպաստների նշանակման համար դիմած քաղաքացիներին այնպես, որ գործնականում բացառվի լրացուցիչ հնարավորությունների մասին նրանց իրազեկված չլինելու տարբերակը:

Ի պատասխան Պաշտպանի գրության՝ ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունից հայտնել են, որ նախարարի հրամանով հաստատվել են ԱՀ կառավարության 2009թ. հունվարի 20-ի «Պետական նպաստների, ծնելիության և բազմազավակության միջոցառումների մասին» N 15-Ն որոշման կիրարկումն ապահովող բոլոր ձևաթղթերը և տրամադրվել սոցիալական ծառայության տարածքային գործակալություններին:

2.1.5. Սույն ոլորտի դիմումների մի մասն էլ առնչվել է Արցախի Հանրապետությունում գործող՝ բնակչությանը շինանյութերի տրամադրման պետական ծրագրին: Դիմումների քննարկման արդյունքում քաղաքացիներն ընդգրկվել են շինանյութերի տրամադրման հերթացուցակներում: Խնդիրն այն է, որ տարիներ շարունակ ոլորտում բացակայում է պատշաճ իրավական կարգավորումը, որի պարագայում հարցը թողնվում է շրջանների վարչակազմերի ղեկավարների հայեցողությանը, ինչը կամայական ու ոչ թափանցիկ որոշումների համար պայմաններ է ստեղծում՝ երբեմն հանգեցնելով ոչ հասցեական հատկացումների և քաղաքացիների դժգոհության: Պաշտպանը ողջունում է ոլորտի կարգավորման ուղղությամբ կառավարության կողմից վերջերս ձեռնարկված քայլերը և միաժամանակ արձանագրում է, որ անհրաժեշտ է հետևողականորեն կատարելագործել ընդունված իրավական ակտը՝ համապատասխան շահառու անձանց շրջանակ և չափորոշիչներ հստակեցնելու նպատակով: Բացի դրանից, արդյունավետ կլինի քաղաքացիների հերթագրման ու շինանյութերի հատկացման

գործընթացները հնարավորինս թափանցիկ դարձնել՝ բարձրացնելու համար հանրային վերահսկողության մակարդակը դրանց հանդեպ:

2.2. Սեփականության իրավունք

2.2.1. Հաշվետու տարում Աշխատակազմը ստացել է սեփականության իրավունքին առնչվող 24 դիմում: Դիմումները, որպես կանոն, վերաբերել են վերաբնակեցման ծրագրով բնակելի տուն սեփականության իրավունքով ձեռք բերելու, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց բնակարանով ապահովելու կամ բնակարանի վարձավճարի փոխհատուցման, ինչպես նաև մի շարք այլ պետական ծրագրերից օգտվելու իրավաչափ ակնկալիքի հարցերին:

2.2.2. Սեփականության իրավունքի ոլորտում շարունակում է խնդրահարույց մնալ վերաբնակեցման ծրագրով քաղաքացիներին բնակելի տուն հատկացնելու, այն հետագայում սեփականաշնորհելու, ինչպես նաև սեփականությունից կամ սեփականության օրինական ակնկալիքից զրկելու հետ կապված հարցը: Խնդիրը հիմնականում այն է, որ բնակարան-բնակելի տուն հատկացնելու մասին պայմանագրում նշվում է, որ 3 և ավելի ամիս բացակայելու դեպքում քաղաքացին զրկվում է բնակելի տնից, սակայն թե որ մարմինը պետք է վերահսկողություն իրականացնի քաղաքացու՝ տվյալ բնակելի տանը բնակության նկատմամբ, կարգավորում չի ստացել: Կարգավորված չէ նաև այն հարցը, թե բացակայելու դեպքում որ մարմնի որոշմամբ է քաղաքացին զրկվում բնակելի տնից, ինչն էլ կամայականության դրսևորման պայմաններ է ստեղծում:

2.2.3. Սեփականության իրավունքին առնչվող դիմումների մեջ մեծ թիվ են կազմել փախստականի կարգավիճակ ունեցող անձանց բնակարանային ապահովման վերաբերյալ դիմումները: Պաշտպանի իրականացրած վերլուծության արդյունքում պարզվել է, որ ԱՀ-ում փախստականի հաշվառման վկայական ստացած անձանց և նրանց ընտանիքի անդամներին ԱՀ օրենսդրությամբ հատկացվում են հետևյալ արտոնությունները՝

- Փախստական ընտանիքին անհատական տնով կամ բնակարանով ապահովում. Բնակարան տրամադրվում է փախստական այն ընտանիքին, որի գլխավորը հանդիսանում է փաստացի բռնագաղթած,

- Միանվագ դրամական օգնություն. տրամադրվում է փախստական ընտանիքի գլխավորին ԱՀ-ում սահմանված աշխատավարձի քսանապատիկի, իսկ ընտանիքի մյուս անդամներից յուրաքանչյուրին՝ հնգապատիկի չափով,

- Փաստացի փախստական համարվող և մինչև 1993թ. ծնված ընտանիքի անդամների ճանապարհածախսի և գույքի տեղափոխման փոխհատուցում յուրաքանչյուր շնչին 20,000 դրամի չափով:

Բացի այդ, փախստականների ընտանիքների համար բնակելի տներ գնելու կամ բնակելի տներ կառուցելու և (կամ) վերանորոգելու նպատակով տրամադրվում է պետական ֆինանսական աջակցություն:

Պաշտպանին պետական լիազոր մարմնից տեղեկացրել են, որ Ադրբեջանից բռնի տեղահանված փախստական ընտանիքների մի մասին տրամադրվել են բնակարաններ և բնակելի տներ: Բնակբարելավման սոցիալական ծրագրերի շրջանակներում բռնագաղթած 88 ընտանիքներ օգտվել են արտոնյալ հիփոթեկային վարկավորումից, իսկ 58 ընտանիքներ ընդգրկվել են վարձավճարի փոխհատուցման ծրագրում:

2.2.4. Փախստականի կարգավիճակ ունեցող անձը, դիմելով Պաշտպանին տեղեկացրել է, որ դիմել է ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն՝ որպես ԱՀ-ում վարձակալական հիմունքներով բնակվող փախստական ընտանիք՝ վարձավճարի փոխհատուցում ստանալու խնդրանքով, սակայն նրա դիմումը մերժվել է: Պաշտպանի միջամտությամբ կատարվել է քաղաքացու բնակարանային պայմանների ու փաստաթղթերի լրացուցիչ ուսումնասիրություն, և փոխհատուցվել է նրա բնակվարձը՝ ամսական համարժեք գումարի չափով:

2.3. Արդար դատաքննության իրավունք

2.3.1. Հաշվետու տարում Աշխատակազմն արդար դատաքննության իրավունքին առնչվող 14 դիմում է ստացել, որոնց վերաբերյալ քաղաքացիներին տրամադրվել է իրավական խորհրդատվություն՝ ներկայացնելով իրենց իրավունքների պաշտպանության հնարավորությունները: Անհրաժեշտության դեպքում Աշխատակազմի աշխատակիցները ներկա են գտնվել դատական նիստերին:

2.3.2. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԱՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքը չի քննարկվում, իսկ բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցվում է նաև այն դեպքում, երբ բողոք ներկայացնելուց հետո շահագրգիռ անձը բողոքում նշված նույն հիմքով և առարկայով հայց կամ բողոք է ներկայացրել դատարան, կամ առկա է նույն հիմքով և նույն առարկայով հայցի կամ բողոքի վերաբերյալ դատարանի վերջնական դատական ակտ: Օրենսդրական նման կարգավորումն արդար դատաքննության իրավունքի ապահովման հարցում Պաշտպանի միջամտության հնարավորությունը սահմանափակում է:

2.3.3. Հաշվետու տարում շարունակել է խնդրահարույց մնալ դատական նիստերի նշանակման ձգձգումների հարցը: Նախորդ տարեկան հաղորդումներում ևս վերոնշյալ հարցը բարձրաձայնվել է Պաշտպանի կողմից, սակայն դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածությունը շարունակում է խնդիրներ առաջացնել քաղաքացիների արդար դատաքննության պատշաճ իրականացման համար: Դատավորների ծանրաբեռնվածությունից զատ, անհրաժեշտ փորձաքննությունների իրականացման ժամկետները ևս շատ հաճախ դատական նիստերի ձգձգումների պատճառ են դառնում:

Քաղաքացին դիմելով Պաշտպանին հայտնել է, որ ինքը և ամուսինն ամուսնալուծության նպատակով դիմել են դատարան: Ունեն մոտ 4 ամսական կրծքով կերակրվող երեխա, ում հայրը խնամքի էր վերցրել նախքան դատական

նիստի կայացումը: Մայրը ցանկություն է հայտնում երեխային իր խնամքի տակ վերցնել՝ հաշվի առնելով այդ տարիքում մայրական խնամքի կարևորությունը, սակայն հայրը հրաժարվում է՝ նշելով, որ մինչև դատարանի վերջնական ակտի առկայությունը երեխային պահելու է իր մոտ: Տվյալ գործով և՛ առաջին, և՛ հաջորդ դատական նիստերը նշանակվել են ձգձգումներով, ինչն առաջացրել է խնդիր ինչպես արդար դատաքննության, այնպես էլ երեխայի իրավունքների պաշտպանության հետ կապված: Պաշտպանն առաջարկում է օրենսդրական կարգավորում տալ խնդրին՝ դատական նիստի օրն ու ժամը նշանակելու ընթացակարգում հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները:

2.4. Ազատ տեղաշարժի իրավունք

2.4.1. Հաշվետու տարում Աշխատակազմը ոլորտին առնչվող 13 դիմում է ստացել, որոնց մի մասը վերաբերում էր մի վայրից զինվորական հաշվառումից հանվելու և մեկ այլ վայրում վերահաշվառվելու խնդրին: Ոլորտում առաջացող խնդիրները համակարգային լուծում են պահանջում, ուստի Պաշտպանը հետևողական է լինելու խախտումները վերացնելու և հետագայում դրանք բացառելու հարցում:

2.4.2. Քաղաքացիության և անձնագիր ստանալու վերաբերյալ դիմումների դեպքում սերտ համագործակցություն է իրականացվել ԱՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության հետ, որի շրջանակներում դիմումներում ներկայացվող հարցերի հիմնական մասը լուծում է ստացել, իսկ մի շարք դեպքերում քաղաքացիներին տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

2.4.3. Մարտակերտի շրջանի Մարտակերտ քաղաքի բնակիչը Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ նախկինում ինքը հաշվառված է եղել Երևան քաղաքում, ունեցել է ԽՍՀՄ անձնագիր, որը կորցրել է: 2015թ.-ից իր ընտանիքի հետ բնակվում է Արցախի Հանրապետությունում և ժամանակավորապես հաշվառված է Մարտակերտ քաղաքում:

Դիմումատուն նշել է, որ ՀՀ անձնագիր ստանալու նպատակով դիմել է համապատասխան անձնագրային ծառայություն, որտեղ իրեն տեղեկացրել են, որ անձնագիր ստանալու համար ինքը պետք է ներկայացնի անձը հաստատող որևէ փաստաթուղթ: Անձը հաստատող արխիվային փաստաթղթեր ձեռք բերելու համար Անձը դիմել է նաև Երևան քաղաքի իր նախկին հաշվառման վայրի ՔԿԱԳ մարմին, սակայն իրեն որևէ փաստաթուղթ չեն տրամադրել, նշելով, որ դրա համար անհրաժեշտ է Մարտակերտի շրջանային անձնագրային ծառայության գրավոր հարցումը: Մարտակերտի շրջանային անձնագրային ծառայությունը հրաժարվել է ուղարկել համապատասխան հարցումը՝ պահանջելով ներկայացնել անձը հաստատող որևէ փաստաթուղթ:

Պաշտպանի և ԱՀ ու ՀՀ անձնագրային և վիզաների վարչությունների համագործակցության արդյունքում խնդիրը դրական լուծում է ստացել. դիմումատուին տրամադրվել է անձնագիր:

2.4.4. Ասկերանի շրջանի Խնապատ գյուղի նախկին բնակիչ, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող անձը Պաշտպանին ուղղված դիմումով հայտնել է, որ արդեն մի քանի տարի է, ինչ Ռուսաստանի Դաշնությունից մեկնում է Արցախի Հանրապետություն, որտեղ ունի սեփականություն: 2018թ. ապրիլի 16-ից մինչև հոկտեմբերի 24-ը անձը գտնվել է Խնապատ գյուղում, որտեղ հիվանդության պատճառով մնացել է 180 օրից ավելի: ՀՀ սահմանին՝ Բագրատաշենի մաքսային կետում, պարզվել է, որ անձը ՀՀ-ում թույլատրված 180 օրվա փոխարեն մնացել է 188 օր, որն էլ հիմք է հանդիսացել, որ նրա նկատմամբ կիրառվի ՀՀ տարածք մուտք գործելու արգելանք, այլապես պետք է վճարվեր 50,000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք:

Դիմումատուն նշել է, որ ՀՀ սահմանով մուտք գործելուց հետո անմիջապես մեկնել է Արցախի Հանրապետություն և 188 օր բնակվել է ԱՀ-ում (ներկայացրել է Արցախի մուտքի և Խնապատի համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք-վկայությունները):

Դիմումի քննարկման շրջանակներում այն փոխանցվել է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին՝ հաշվի առնելով, որ նշված

խնդրի լուծումը գտնվում է վերջինիս իրավազորության տակ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հայտնել է, որ գրություն է հասցեագրվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ 2018թ.հոկտեմբերի 25-ին կայացված թիվ 709 որոշման իրավաչափության հարցը քննարկման առարկա դարձնելու միջնորդությամբ:

Ի պատասխան՝ ոստիկանությունից տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ նախաձեռնված վարույթի շրջանակներում, հիմք ընդունելով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուղարկված գրությունը և կից ներկայացրած փաստաթղթերը, որոնցով հիմնավորվել է նոր երևան եկած փաստական հանգամանքների առկայությունը՝ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում կայացվել է թիվ 44 որոշումը՝ 2018թ.հոկտեմբերի 25-ի թիվ 709 որոշումը բեկանելու և դիմումատուի նկատմամբ կիրառված մեկամյա արգելափակումը վերացնելու վերաբերյալ:

2.5. Աշխատանքային իրավունքներ

2.5.1. 2018թ. ընթացքում Աշխատակազմն աշխատանքային իրավունքներին առնչվող 12 դիմում է ստացել հիմնականում ուսումնական հաստատություններից: Դրանք առավելապես վերաբերել են դպրոցների տնօրենների և ուսուցիչների աշխատանքային հարաբերություններին: Մի շարք դեպքերում աշխատողները դիմումներ են ներկայացրել այն մասին, որ գործատուն չի պահպանել նկատողություն տալու համար սահմանված իրավական ընթացակարգը՝ առանց համապատասխան բացատրություն վերցնելու աշխատողին գրավոր նկատողություն տալով:

2.5.2. Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է նաև աշխատանքային պայմանագիրն անհիմն լուծարելու վերաբերյալ մեկ դիմում, որի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

2.6. Պատշաճ վարչարարության իրավունք

2.6.1. Հաշվետու տարում Պաշտպանը ստացել է ոլորտին առնչվող 10 դիմում, որոնք հիմնականում վերաբերել են քաղաքացիների դիմումներին գրավոր պատասխան տալու օրենսդրական ժամկետը չպահպանելու խնդրին:

2.6.2. Պաշտպանն արձանագրում է, որ օրենքով սահմանված ժամկետում քաղաքացիների գրավոր դիմումներին պատասխան չտալու պրակտիկան շարունակական բնույթ է կրում, քանի որ դրանք մեծ թիվ են կազմել նաև նախորդ տարիներին: Պաշտպանը կոչ է անում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենսդրությամբ սահմանված ժամկետում և շրջանակներում քաղաքացիների գրավոր դիմումներին և բողոքներին տալ գրավոր պատասխան՝ ապահովելով նաև նրանց տեղեկություններ ստանալու իրավունքը:

2.6.3. Լրագրողը դիմել է Պաշտպանին՝ խնդրելով նրա միջամտությունը Ստեփանակերտի քաղաքապետարանից իր հարցման պատասխանը ստանալու հարցում: Բողոքի առթիվ սկսված քննարկման շրջանակներում Պաշտպանը գրություն է հասցեագրել Ստեփանակերտի քաղաքապետարան, որից հետո քաղաքապետարանը քաղաքացուն գրավոր տրամադրել է անհրաժեշտ տեղեկությունները:

2.6.4. Քաղաքացին, դիմելով Պաշտպանին, հայտնել է, որ 2014թ. ընդունվել է Արցախի պետական համալսարան, սակայն ուսումը կիսատ է թողել պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու պատճառով: Ծառայության ավարտից հետո տեղեկացվել է, որ ինքը հեռացվել է համալսարանից՝ ուսման վարձի վճարումն ուշացնելու պատճառով: Դիմումատուի պնդմամբ, ինքը դիմել է համալսարան՝ իր միջնակարգ կրթության ատեստատը ստանալու նպատակով, սակայն իր պահանջը մերժվել է, քանի որ չէր վճարել ուսման վարձը:

Պաշտպանի միջամտությամբ դիմումատուին վերադարձվել է իր միջնակարգ կրթությունը հավաստող ատեստատը:

2.7. Առողջության պահպանման իրավունք

2.7.1. Պաշտպանը ստացել է առողջության պահպանման իրավունքին վերաբերող 9 դիմում, որոնք Պաշտպանին հասցեագրվել են առավելապես ազատությունից զրկված անձանց, ինչպես նաև զինծառայողների հարազատների կողմից: Դիմումներն աշխատանքային կարգով քննարկվել են քրեակատարողական վարչության, ինչպես նաև զինվորական հոսպիտալի և զորամասերի համապատասխան հարցերով պատասխանատուների հետ:

2.7.2. Հաշվետու տարում բողոքներ են ստացվել նաև Ստեփանակերտ քաղաքում աղբահանության կազմակերպման սանիտարական նորմերի չապահովման կապակցությամբ: Քաղաքացիները նշում են, որ մի շարք թաղամասերում աղբամանները բավականին մոտ են տեղադրված բնակելի շենքերին, ինչն էլ սանիտարահիգիենիկ ոչ առողջ միջավայր է ստեղծում բնակիչների համար: Գրանցվել են բողոքներ նաև աղբահանությունը ժամանակին չկազմակերպելու վերաբերյալ:

2.8. Հավաքների ազատության իրավունք

2.8.1. Պաշտպանն արտակարգ ռեժիմով հետևել է 2018թ. Ստեփանակերտում տեղի ունեցած խաղաղ հավաքների ընթացքին: Աշխատակազմի աշխատակիցները մշտապես գտնվել են իրականացվող հավաքների վայրում՝ դրանց մասնակիցների սահմանադրական իրավունքների ապահովմանն անձամբ հետևելու համար: Հավաքների վայրերում գտնվելու ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին են դիմել մի քանի քաղաքացիներ՝ իրավական բնույթի խնդիրներով: Մի քանի դեպքով տրվել են իրավունքի վերաբերյալ պարզաբանումներ, իսկ մյուս դեպքերով ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ Պաշտպանին գրավոր դիմումներ հասցեագրելու վերաբերյալ:

2.8.2. Որպես պետական իրավասու մարմիններին ուղղված օրենսդրական առաջարկ՝ Պաշտպանը բարձրաձայնել է արդեն իսկ մշակված՝ հավաքների ազատությունը կանոնակարգող ԱՀ օրենսդրությունը սեղմ ժամկետում ընդունելու

անհրաժեշտության մասին, ինչը խաղաղ հավաքների կազմակերպիչների ու մասնակիցների համար կստեղծեր իրենց սահմանադրական իրավունքի իրականացման ավելի կանխատեսելի պայմաններ: Վերլուծելով արդեն իսկ առկա փորձը՝ Պաշտպանը նաև ներկայացրել է իրավական դիրքորոշում՝ ուղղված հավաքների ազատության ոլորտում իրավակիրառ պատշաճ պրակտիկայի ձևավորմանը: Պաշտպանը ողջունելի է համարում, որ «Հավաքների ազատության մասին» ԱՀ օրենքը կարճ ժամկետում ընդունվել և ուժի մեջ է մտել՝ ներառելով նաև Պաշտպանի առաջարկները:

2.9. Երեխաների իրավունքներ

2.9.1. Հաշվետու տարում Պաշտպանը երեխաների իրավունքներին վերաբերող 6 դիմում է ստացել, որոնք հիմնականում վերաբերել են ծնողներից մեկի կողմից երեխայի հետ տեսակցության, ալիմենտային պարտավորությունների հետ կապված հարցերին:

2.9.2. Աշխատակազմը բանավոր բողոքներ է ստացել Քաշաթաղի շրջանի Միջնավան քաղաքի միջնակարգ դպրոցի որոշ աշակերտների ծնողներից ու աշխատակիցներից՝ դպրոցում լարված իրավիճակի մասին, ինչի հետևանքով զգալի թվով ծնողներ իրենց երեխաներին չէին ուղարկում ուսումնական պարապմունքներին:

Բանավոր բողոքների հիման վրա՝ որոշում է կայացվել մարդու իրավունքների ենթադրյալ խախտման վերաբերյալ բողոքը քննարկման ընդունելու մասին, ինչից հետո Աշխատակազմի ներկայացուցիչները մեկնել են Միջնավան՝ տեղում համակողմանիորեն ուսումնասիրելու խնդիրը[4]: Նրանք առանձնազրույցներ են ունեցել մի խումբ աշակերտների, ծնողների, մանկավարժական կազմի և տնօրենի հետ: Առանձնազրույցների և դիտարկման այլ աշխատանքների ընթացքում

4 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «ՄԻՊ ներկայացուցիչները այցելել են Միջնավանի դպրոց՝ երեխաների իրավունքների խախտման վերաբերյալ բողոքներն ուսումնասիրելու նպատակով», 11 հոկտեմբերի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=130 (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2019թ.):

արձանագրվել են երեխայի իրավունքներին վերաբերող մի շարք բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Աշխատակազմը շեշտադրել է հետևյալ կետերը՝

1) Անթույլատրելի են երեխաների հանդեպ վատ ու խտրական վերաբերմունքի, բռնության կիրառման, անհամաչափ սահմանափակման և երեխայի մարդկային արժանապատվության հետ անհամատեղելի այլ դեպքերը, որոնք վնասում են թե՛ երեխաների լիարժեք ու ներդաշնակ զարգացմանը, թե՛ կրթության իրավունքի ամբողջական և արդյունավետ իրացմանը:

2) Պետությունը, որպես պոզիտիվ պարտականություն, պարտավոր է դպրոցում ապահովել բարենպաստ միջավայր երեխաների իրավունքների պաշտպանության և փոխհարգանքի հիման վրա ձևավորված դաստիարակության ապահովման համար: Այդ ճանապարհին էական հանգամանք է տնօրինության, ուսուցիչների և այլ աշխատակիցների միջև պատշաճ փոխհարաբերությունների առկայությունը՝ բացառելով հատկապես երեխաների ներկայությամբ կոնֆլիկտային իրավիճակների ձևավորումն ու ուսուցչի արժանապատվության ոտնահարումը: Երեխաների լավագույն շահից է բխում, որ հատկապես դպրոցի ներսում ուսուցիչներն իրենց բարձր առաքելությանը համապատասխան վարք դրսևորեն և արժանանան հարգալից վերաբերմունքի:

3) Ծնողները, որպես երեխաների լավագույն շահի առաջնային ներկայացուցիչ և պատասխանատու, պետք է զերծ մնան երեխաների իրավունքների անհամաչափ սահմանափակումից՝ որպես այլոց հանդեպ բողոքի դրսևորման նշան: Այդպիսի դեպքերում կարևոր է առաջնահերթ ուշադրության ներքո պահել երեխաների շահերը և հաշվի առնել նրանց կարծիքները՝ իրենց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան:

Պաշտպանը համապատասխան գրություններ է հասցեագրել Միջնավանի դպրոցի կառավարում և վերահսկողություն իրականացնող պետական կառավարման լիազոր մարմիններին՝ պահանջելով պարզաբանումներ արձանագրված բողոքների

վերաբերյալ և ներկայացնելով ուսումնասիրության արդյունքներից բխող առաջարկներ:

Քննարկման արդյունքում, նաև Պաշտպանի միջամտությամբ Քաշաթաղի շրջանի Միջնավան համայնքի դպրոցի տնօրենն ազատվել է աշխատանքից:

2.9.3. Պաշտպանը և Աշխատակազմի մի խումբ աշխատակիցներ այցելել են Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն՝ ծանոթանալու կենտրոնի պայմաններին:
Պաշտպանը կարևորել է նման հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանությունը՝ հայտնելով իր վճռականությունը պարբերական ուշադրության ներքո պահելու առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հիմնախնդիրները: Պաշտպանն ու աշխատակիցներն անմիջական միջավայրում շփվել են կենտրոնի սաների հետ, ինչպես նաև առանձնազրույց ունեցել որոշ երեխաների և հաստատության աշխատակիցների հետ: Նրանք ծանոթացել են առկա պայմաններին և արձանագրել մի շարք խնդիրներ, որոնց լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում համապատասխան առաջարկներ են ներկայացվելու պետական լիազոր մարմիններին:

2.9.4. Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է ընդունել Երեխայի իրավունքների մասին 1989թ. կոնվենցիան (Այսուհետ նաև՝ ԵԻԿ): Այն երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային խրախուսելի չափանիշներ, երեխաների քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքների ամբողջական շրջանակ պարունակող միջազգային փաստաթուղթ է: ԵԻԿ-ն ընդգծում է չորս հիմնական սկզբունք, մասնավորապես՝ խտրականության բացառումը, երեխայի լավագույն շահը, կյանքի, գոյության և զարգացման իրավունքը, և երեխաների վրա ներգործություն ունեցող որոշումների կայացման ժամանակ երեխայի կարծիքը հաշվի առնելու իրավունքը (ելնելով նրանց տարիքից և հասունության աստիճանից):

Բացի այն բանից, որ ԵԻԿ-ը կարող է համակարգային հիմք հանդիսանալ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում, այն նաև կարող է մոնիթորինգային անհրաժեշտ գործիքակազմ տրամադրել Պաշտպանին՝ իրականացնելու պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ:

2.10. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ

2.10.1. Պաշտպանի նախաձեռնությամբ հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը կլոր սեղան-քննարկում է կազմակերպվել Արցախում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության թեմայով, որին մասնակցում էին պետական լիազոր մարմինների և ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում Պաշտպանն անդրադարձել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում առկա որոշ խնդիրների, մասնավորապես՝ հասարակության քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքում նրանց ներգրավվածության, կրթության, կարողությունների զարգացման, զբաղվածության, ֆիզիկական միջավայրի հարմարեցման և մի շարք այլ հարցերի: Նա հատուկ ուշադրության է արժանացրել հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության հարցը՝ այն համարելով և՛ հաշմանդամություն ունեցող անձանց, և՛ երեխաների իրավունքների պաշտպանության խնդիր:

2.10.2. Պաշտպանն այցելել է Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն՝ ծանոթանալով 20-ամյա կենտրոնի պայմաններին, որոնք միտված են տարբեր ֆիզիկական ու մտավոր խնդիրներ ունեցող անձանց վերականգնմանն ու զարգացմանը[5]: Պաշտպանը բարձր է գնահատել կենտրոնի դերակատարությունն

5 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Արտակ Բեգլարյանը բարձր է գնահատել Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոնի գործունեությունը», 29 նոյեմբերի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=128 (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2019թ.):

արցախցիների առողջության վերականգնման գործում՝ կարևորելով, որ այն անվճար հիմունքներով սպասարկում է բոլոր տարիքի անձանց, ինչպես նաև նշանակալի աշխատանք է կատարում հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման ուղղությամբ: Պաշտպանը ծանոթացել է նաև կենտրոնին կից գործող՝ Մանկական ցերեկային առողջության կենտրոնի և պետական ու բարեգործական համատեղ միջոցներով երկու տարի առաջ հիմնված աուտիզմի ցերեկային խնամքի ու բուժման կենտրոնի պայմաններին՝ ընդգծելով ընտրված ձևաչափի ու մեթոդաբանության դրական ազդեցությունը հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության հարցում: Պաշտպանը և կենտրոնի հիմնադիրը մտքեր են փոխանակել հետագա համագործակցության շուրջ՝ երկուստեք պատրաստակամություն հայտնելով խորացնել երկու կառույցների միջև առկա փոխգործակցությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պատշաճ պաշտպանության նպատակով:

2.10.3. Պաշտպանը հայտնում է իր մտադրությունը համապարփակ կերպով ուսումնասիրել հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավիճակն ու խնդիրները, որպեսզի հնարավոր լինի պետական լիազոր մարմիններին և քաղաքացիական հասարակությանն աջակցել վերհանված խնդիրների համակարգային լուծման հարցում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում Պաշտպանը շեշտադրում է նախևառաջ բժշկական մոդելից սոցիալական մոդելին անցնելու անհրաժեշտությունը: Եթե բժշկական մոդելը հաշմանդամությունը համարում է հիվանդություն, որի հետևանքով անձի կենսագործունեությունը խանգարվում է, ապա սոցիալական մոդելը, որը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա, հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ-մշակութային արժեքների հետևանք: Պաշտպանը ձեռնամուխ է լինելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում հետևյալ խնդիրների համապարփակ ուսումնասիրմանը՝

- Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ ԱՀ հիմնական իրավական ակտերի համապատասխանելիությունը միմյանց և միջազգային խրախուսելի չափանիշներին,

- Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում իրենց մասնակցայնության իրավունքի իրացման հետ կապված խնդիրները,

- Պետության կողմից ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման գործում առկա խնդիրները, իրավակիրառ պրակտիկայի բացերը, վերահսկողական մեխանիզմների թերացումները,

- Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ապահովման և արտոնությունների տրամադրման հետ առնչվող խնդիրները,

- Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և զբաղվածության ապահովման խնդիրները:

2.10.4. Պաշտպանը հանձնառություն է ստանձնում իր նպաստը բերել Արցախում միջազգային խրախուսելի չափանիշների ներդրման գործին: Այդ առումով Պաշտպանն ընդգծում է նախևառաջ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային Արցախի Հանրապետության միանալու անհրաժեշտությունը[6], ինչը բարենպաստ իրավական և մեթոդական հենք կապահովի ոլորտում իրականացվելիք հետագա բարեփոխումների համար: Կոնվենցիային միանալը նաև հնարավորություն կտա Պաշտպանի հաստատությանը ձեռք բերել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառման, աշխատանքի, առողջապահության, կրթության, հասարակության կյանքին լիարժեք մասնակցության, արդարադատության մատչելիության, անձնական անձեռնմխելիության, ազատ տեղաշարժի,

6 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Արցախի ՄԻՊ-ը կարևորում է հաշմանդամների իրավունքների պատշաճ պաշտպանությունը՝ ընդգծելով ՄԱԿ-ի կոնվենցիային միանալու անհրաժեշտությունը», 3 դեկտեմբերի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=130 (վերջին մուտքը՝ 28 մարտի, 2019թ.):

անհատական շարժունակության և այլ իրավունքների հավասար և ինքնուրույն իրացման ապահովման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու լիազորություն ունեցող ազգային մեխանիզմի կարգավիճակ:

2.11. Այլ իրավունքներ

2.11.1. Այս ենթաբաժնում ներառվել են 22 դիմումներ, որոնք, որպես կանոն, առնչվել են միջանձնային հարաբերություններին (ենթակա չեն Պաշտպանի քննարկմանը), կոմունալ-կենցաղային, փողոցների բարեկարգման, ասֆալտապատման և մի շարք այլ հարցերի:

2.11.2. Քաղաքացին, դիմելով Պաշտպանին հայտնել է, որ «Արցախկապ» ՓԲԸ-ն մի քանի տարի շարունակ միջամտում է արտասահմանյան որոշ հեռուստաալիքների եթերները՝ դրանով իսկ խախտելով հեռուստադիտողների իրավունքները: Դիմումատուի պնդմամբ, սկզբում «Արցախկապ» ՓԲԸ-ն միջամտում էր վերոնշյալ ալիքների գովազդային ընդմիջումներին, իսկ այնուհետև սկսել է միջամտել նաև ուղիղ եթերների, այլ հաղորդումների, կինոնկարների ընթացքում՝ վազող տողով ծածկելով տիտրերում գրվող անունները, պաշտոնները, կոչումները և այլն: Դիմումի քննարկման շրջանակներում հարցում է կատարվել ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով, որից հետո հանձնաժողովի կողմից կատարվել է վերահեռարձակվող հեռուստաալիքների եթերի մոնիթորինգ, ինչի արդյունքներով «Արցախկապ» ՓԲԸ-ին տրվել է նախազգուշացում՝ թերությունները շտկելու համար:

2.11.3. Արցախի Հանրապետության հանրային ծառայողը Ֆեյսբուք սոցիալական ցանցի իր էջի միջոցով հրապարակայնորեն Պաշտպանի ուշադրությունն է հրավիրել իր արտահայտվելու ազատության սահմանափակման կոնկրետ օրինակի վրա՝ ակնկալելով Պաշտպանի դիրքորոշումը դրա վերաբերյալ: Հարցի ուսումնասիրության արդյունքում, Պաշտպանը եկել է այն եզրահանգման, որ ներկայացրած հարցը վերաբերում է արտահայտվելու ազատությանը, որն ամրագրված է մարդու իրավունքների միջազգային կոնվենցիայում, այդ թվում՝

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (հոդված 19) և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (հոդված 10), ինչպես նաև ԱՀ Սահմանադրությամբ, որի 42-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Կարևորելով արտահայտվելու ազատության պատշաճ պաշտպանությունն Արցախում, Պաշտպանը բարձրացված հարցի վերաբերյալ ներկայացրել է իրավական դիրքորոշում[7]՝ հիմք ընդունելով ինչպես միջազգային և ներպետական կարգավորումները, այնպես էլ ՄԻԵԴ իրավաբանությունը: Անդրադառնալով հանրային ծառայողի արտահայտվելու ազատության սահմանափակման իրավաչափությանը, Պաշտպանը շեշտադրել է, որ ինչպես արտահայտվելու ազատությունն է հարաբերական, այնպես էլ՝ դրա սահմանափակումները, որոնք հավասարակշռվում են և՛ մարդու հիմնարար իրավունքներով ու ազատություններով, և՛ տվյալ դեպքում հանրային ծառայողի իրավունքներով:Պաշտպանը եզրահանգել է, որ հանրային ծառայողի արտահայտվելու ազատության սահմանափակումը կարող էր հետապնդել հանրային ծառայողի քաղաքական զսպվածությունը և էթիկայի կանոնների պահպանումը երաշխավորելու նպատակ, ինչն, ընդհանուր առմամբ, ունի օրենսդրական հիմք: Մինչդեռ հարկ է ընդգծել, որ ԱՀ օրենսդրությամբ սահմանված չեն հանրային ծառայողի իրավունքների հանդեպ միջամտության այն միջոցները, որոնք կարող են կիրառվել հանրային ծառայողի կողմից քաղաքական

7 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Արցախի ՄԻՊ-ի իրավական դիրքորոշումը՝ հանրային ծառայողի արտահայտվելու ազատության վերաբերյալ», 28 դեկտեմբերի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=134 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

զսպվածությունն ու էթիկայի կանոնները չպահպանելու դեպքում, այնինչ այդ միջոցների հստակեցման անհրաժեշտությունը բխում է Դաշնագրի ու Կոնվենցիայի վերոբերյալ դրույթներից: Բացի այդ, անհրաժեշտ է օրենքում որոշակիացնել քաղաքական զսպվածության սահմանները, որպեսզի այդ սահմանափակման կիրառումը կանխատեսելի և չափելի լինի և՛ հանրային ծառայողի, և՛ գործատուի համար:

2.11.4. Պաշտպանին հասցեագրած դիմումով Քաշաթաղի շրջանում հաշվառված, բայց Մարտակերտի շրջանում բնակվող տարեց քաղաքացին հայտնել է, որ ունի որոշակի առողջական խնդիրներ, բնակվում է միայնակ, չունի հոգ տանող և ցանկանում է տեղափոխվել ու մշտական բնակություն հաստատել Ստեփանակերտի տուն-ինտերնատում:

Պաշտպանի միջամտության ու Քաշաթաղի սոցիալական ծառայության տարածքային գործակալության անմիջական աջակցության արդյունքում պատրաստվել են քաղաքացուց պահանջվող փաստաթղթերը, և նա բնակություն է հաստատել «Ստեփանակերտի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում:

2.11.5. «Արցախի Արդարություն կուսակցություն» անվանումով ֆեյսբուքյան օգտատերը Պաշտպանին հղված բաց նամակով հայտնել է, որ ընտանիքներում ծնված երրորդ և հաջորդ երեխաների անվամբ նպատակային ժամկետային ավանդները, սկսած 2009թ.-ից, բացված են միայն Արցախբանկում՝ 7.5 տոկոսադրույքով, այն դեպքում, երբ այդ նույն բանկում վերջին 5 տարիների ընթացքում ավանդների միջին տոկոսադրույքը կազմում է 13.5 տոկոս, ինչի հետևանքով երեք և ավելի երեխաներ ունեցող յուրաքանչյուր ընտանիք այս տարիների ընթացքում զրկվել է 300 – 400 հազար դրամ եկամուտից: Արցախի Արդարություն կուսակցությունը գտնում է, որ տեղի է ունեցել և ներկայում շարունակվում է մարդու իրավունքների զանգվածային ոտնահարում:

Աշխատակազմի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԱՀ կառավարության 2009թ. հունվարի 20-ի թիվ 15 որոշմամբ սահմանված

«Ժամկետային ավանդների բացման» կարգի 11-րդ կետի համաձայն՝ ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի անվամբ բանկային կամ ֆինանսական այլ հաստատությունում բացված ժամկետային ավանդի տարեկան տոկոսադրույքի չափը հաստատում է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ համաձայնեցնելով ֆինանսական հաստատության հետ: Տվյալ դեպքում պայմանագիրը կնքվել է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու «Արցախբանկ» ՓԲԸ-ի միջև 7.5 տոկոսադրույքով՝ հաշվի առնելով տվյալ ավանդների որոշ առանձնահատկություններ, այդ թվում՝ երկարատև ժամկետով պայմանավորված ռիսկերը: Հետևաբար, քաղաքացիների իրավունքների խախտում չի կատարվել: Իրավունքի որևէ խախտում չի արձանագրվել նաև ֆինանսական հաստատության ընտրության հարցում, քանի որ այդ ավանդը համարվում է պետական լրացուցիչ աջակցություն, այլ ոչ թե պետության ուղիղ պարտավորություն, և պետությունը կարող է իր հայեցողությամբ ընտրել տվյալ աջակցության տրամադրման մեխանիզմը: Մյուս կողմից, կարևորելով պետական աջակցության տրամադրման թափանցիկությունն ու ներառականությունը, Պաշտպանն ընդգծում է, որ նման դեպքերում նախընտրելի կլինի հնարավորության պարագայում պետական աջակցության շահառուներին կամ նրանց ներկայացուցիչներին ընդգրկել ֆինանսական հաստատության ընտրության գործընթացում, որպեսզի նրանք իրավունք ունենան ընտրություն կատարել նույնական ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև:

Բաժին 3. Պաշտպանի գործունեությունը հարկադիր պահման վայրերում

3.1. Պաշտպանի և Աշխատակազմի աշխատակիցների այցերը հարկադիր պահման վայրեր 2018թ. ընթացքում կրել են պարբերական բնույթ: Ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովումը Պաշտպանն իրականացրել է ինչպես անհատական դիմումների կապակցությամբ քննարկման ընթացակարգ նախաձեռնելու, այնպես էլ ազատությունից զրկված անձանց պահման պայմանները դիտարկելու, վերջիններիս և հաստատության աշխատակիցների հետ առանձնազրույցներ ունենալու ընթացքում անմիջականորեն ընկալված փաստերին պատշաճ արձագանքելու միջոցով:

3.2. 2018թ. ընթացքում ԱՀ ոստիկանության քրեակատարողական վարչությունում գտնվող անձանցից ստացված դիմումներն առնչվել են ազատությունից զրկված անձանց բուժօգնության տրամադրման, ազգականների հետ տեսակցության կազմակերպման, այլ քրեակատարողական հիմնարկներ տեղափոխման, ինչպես նաև վաղաժամկետ ազատման հետ կապված հարցերին: Հաշվետու տարում Աշխատակազմ է մուտքագրվել վատ վերաբերմունքի և դատապարտյալի ինքնավնասման վերաբերյալ մեկական դիմում:
Բարձրացված հարցերի մի մասն աշխատանքային կարգով քննարկվել է քրեակատարողական վարչության ղեկավարության հետ և լուծում ստացել:

3.3. Հարկադիր պահման վայրերում արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնք շարունակելու են մնալ Պաշտպանի ուշադրության կենտրոնում՝ և՛ արձանագրվող իրավունքների խախտումները վերացնելու, և՛ հնարավոր խախտումները կանխարգելելու նպատակով:

- Պաշտպանի ուշադրության կենտրոնում են եղել ազատությունից զրկված անձանց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը, խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու հետ կապված հարցերը:

- Պաշտպանն արձանագրել է քրեակատարողական վարչությունում գերբնակեցման և խցերում ազատազրկված անձանց անհավասարաչափ բաշխման, ինչպես նաև դատապարտյալների, ձերբակալված և կալանավորված անձանց տեսանելիության և խցերի լուսավորվածության սահմանափակման դեպքեր:
- Պաշտպանն արձանագրում է, որ քննչական մեկուսարանում ձերբակալված և կալանավորված անձանց՝ քննիչների ու պաշտպանների հետ հանդիպումների համար նախատեսված է միայն մեկ սենյակ, որը լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում հանդիպումների կազմակերպման համար: Բացի դրանից, պաշտպանների հետ տեսակցությունը տվյալ սենյակում տեղի է ունենում դուռը բաց վիճակում, որը չի համապատասխանում բնագավառը կարգավորող ակտերի պահանջներին:

- Պաշտպանը, ողջունելով քրեակատարողական հիմնարկում հեռախոսային կապի առկայությունը, արձանագրում է նաև, որ քննչական մեկուսարանում նման հնարավորությունը բացակայում է, ինչպես նաև ոլորտի պատասխանատուների ուշադրությունն է հրավիրում ազատազրկված անձանց՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ նամակագրություն վարելու, տեսակցություններ ունենալու, հեռախոսակապից օգտվելու, գրականությունից, հնարավոր լրատվամիջոցներից օգտվելու և Պաշտպանին դիմելու իրավունքների իրացման վրա:

- Ազատությունից զրկված անձանց՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի իրացման հետ կապված խնդիրների մի մասն առընչվում է տեսակցությունների տրամադրման ընթացակարգերի, ինչպես նաև տեսակցությունների համար նախատեսված սենյակների ու դրանց պայմանների հետ: Մասնավորապես, հիմնական խնդիրներից են տեսակցության համար նախատեսված սենյակների զբաղվածությունը և տեսակցության սենյակում միջնապակու առկայությունը: Կարևորելով ազատազրկված անձանց ուղղման համար մեծ նշանակություն ունեցող, ընտանիքի անդամների հետ անմիջական՝ առանց արհեստական խոչընդոտների շփման դերը՝ Պաշտպանն առաջակում է

ազատազրկված անձանց անմիջական շփման հնարավորություն ընձեռել մերձավոր ազգականների հետ:

Վերը նշված իրավունքների պատշաճ ապահովումն ու իրացումը բխում են Արցախի Հանրապետության կողմից ընդունված միջազգային պայմանագրերից (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա) և ԱՀ Սահմանադրությունից:

Պաշտպանը գրություններ է հղել և քննարկումներ սկսել պետական լիազոր մարմնի հետ նշված և մի շարք այլ խնդիրների լուծման ուղղությամբ: Գիտակցելով, որ խնդիրների մի մասը պայմանավորված է քրեակատարողական վարչության շենքային ոչ բարվոք վիճակով՝ միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ նման խնդիրները վերացնելու ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքների արդյունքում պետությունը կապահովի ազատազրկված անձանց մի շարք հիմնարար իրավունքների (այդ թվում՝ խոշտանգումներից զերծ լինելու, բավարար բանտային պայմաններ ունենալու, արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու և այլն) իրացումը:

3.4. 2017թ. դեկտեմբերի 21-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԱՀ օրենքով Պաշտպանի հաստատությանը տրվեց խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակ, որը Պաշտպանին հնարավորություն է տալիս իրականացնելու պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ իր ընտրությամբ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով: Պաշտպանն արձանագրում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան Արցախի Հանրապետության կողմից ընդունելու անհրաժեշտությունը, քանի որ այն հնարավորություն կտա պետությանը բարեփոխել համակարգը

միջազգային խրախուսելի չափանիշներին համապատասխան, իսկ Պաշտպանին հնարավորություն կտա առավել համապարփակ գործունեություն իրականացնել այս ոլորտում:

3.5. Հարկ է նշել, որ նախորդ տարիների զեկույցներում Պաշտպանը բազմիցս բարձրաձայնել է Շուշիի Քրեակատարողական հիմնարկի լիազորություններն ԱՀ արդարադատության նախարարության վերահսկողությանը փոխանցելու անհրաժեշտության մասին, ինչը լրացուցիչ բարենպաստ պայմաններ կստեղծի առկա որոշ խնդիրների վերացման ու իրավունքների հնարավոր խախտումների կանխարգելման համար: Պաշտպանը ողջունում է, որ ԱՀ Նախագահի հանձնարարականով գործընթացն արդեն սկսվել է և նախատեսված է, որ մինչև 2019թ. չորրորդ եռամսյակ այն ամբողջությամբ կավարտվի:

Պաշտպանը պատրաստակամություն է հայտնում իր լիազորությունների ու կարողությունների շրջանակներում աջակցելու փոխանցման այդ գործընթացի հավուր պատշաճի իրականացմանը:

3.6. Հարկադիր պահման վայրերում գտնվող անձանց իրավունքների ապահովման հարցերը շարունակելու են մնալ Պաշտպանի անմիջական հսկողության ներքո՝ կիրառելով Օրենքով իրեն տրված ողջ գործիքակազմը: Պաշտպանը նախատեսում է առաջիկայում մոնիթորինգային այցերի միջոցով ուսումնասիրել նաև ԱՀ առողջապահության նախարարության հոգեթմրաբանական դիսպանսերում պահվող անձանց իրավունքների պաշտպանության վիճակը, ոլորտում առկա խնդիրները՝ հանդես գալով վերհանված խնդիրները կարգավորելուն ուղղված համապատասխան առաջարկներով ու նախաձեռնություններով:

Բաժին 4. Պաշտպանի գործունեությունը հանրային իրազեկման ոլորտում

4.1. Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել Պաշտպանին դիմելու մատչելիության, ինչպես նաև հասարակայնության հետ կապերի զարգացման ուղղությամբ: Գործարկվել է անվճար թեժ գիծ՝ 116 հեռախոսահամարով: Ստեղծվել են յութուբյան ալիք[8] և ինստագրամի էջ[9], որտեղ ներկայացված են ԱՀ ՄԻՊ գործունեությանը վերաբերող տարբեր տեսակի նյութեր: Հայ բարեգործական ընդհանուր միության աջակցությամբ՝ ընթացքում են ԱՀ ՄԻՊ հաստատության նոր կայքի մշակման աշխատանքները:

4.2. 2018թ. ընթացքում Պաշտպանը տարբեր ձևաչափերով ավելի քան 30 հանրային հաղորդակցություն է իրականացրել հեռուստատեսությամբ, ռադիոյով, տպագիր և առցանց մամուլով: Մասնավորապես՝ Պաշտպանը հյուրընկալվել է Արցախի հանրային հեռուստատեսության «Ողջույն Արցախ» հաղորդաշարին (11.12.2018թ.[10], 19.03.2018թ.[11]), «Օր լրատվականին» (02.11.2018թ.)[12], «PARA TV» հեռուստատեսության մեդիա նախագծին (29.09.2018թ.)[13], «Երկիր մեդիա»

8 Youtube, Artsakh Ombudsman, հղում՝ https://www.youtube.com/channel/UCEm86zfG2FOOsXJgvnjtypA?view_as=subscriber, (վերջին մուտքը՝ 25 մարտի, 2019թ.):

9 Instagram, Artsakh Ombudsman, հղում՝ https://www.instagram.com/artsakhombuds/, (վերջին մուտքը՝ 25 մարտի, 2019թ.):

10 Արցախի հանրային հեռուստատեսության «Ողջույն Արցախ» հաղորդաշար, 11 դեկտեմբերի, 2018թ., հղում՝ https://www.youtube.com/watch?v=9SCIF8BDLxc&list=PLBbo3o3kGIBbLYE2GZF6K7O5LOwKJWgHb&index=4, (վերջին մուտքը՝ 21 մարտի, 2019թ.):

11 Արցախի հանրային հեռուստատեսության «Ողջույն Արցախ» հաղորդաշար, 19 մարտի, 2018թ., հղում՝ https://www.youtube.com/watch?v=-sd9MNNiTug&index=21&list=PLBbo3o3kGIBbLYE2GZF6K7O5LOwKJWgHb, (վերջին մուտքը՝ 21 մարտի, 2019թ.):

12 Արցախի հանրային հեռուստատեսության «Օր լրատվական»-ի հիմնական թողարկում, 2 նոյեմբերի, 2018թ., հղում՝ https://www.youtube.com/watch?v=PyztzTcD058&index=7&list=PLBbo3o3kGIBbLYE2GZF6K7O5LOwKJWgHb, 4:46 րոպեից, (վերջին մուտքը՝ 21 մարտի, 2019թ.):

հեռուստաընկերության «Երկիրն այսօր» հաղորդաշարին (21.06.2018թ.)[14], «Artsakhtimes» լրատվականին (02.04.2018թ.)[15], «Ազատություն» ռադիոկայանի «Ֆեսբուքյան ասուլիս» հաղորդաշարին (03.04.2018թ.)[16] և մի շարք այլ լրատվամիջոցների, որոնց հնարավոր է ծանոթանալ Պաշտպանի պաշտոնական յութուբյան ալիքում:

4.3. Հաշվետու տարում Պաշտպանը և Աշխատակազմի աշխատակիցներն այցելություններ են կատարել ուսումնական հաստատություններ, դպրոցական ճամբարներ, մարդու իրավունքների մասին ելույթներով հանդես են եկել Արցախի տարբեր շրջաններում: Հանդիպումների ընթացքում Պաշտպանը կարևորել է մարդու իրավունքների շարունակական ուսուցումը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով:

4.4. Պաշտպանը հյուրընկալվել է հայկական երկու պետությունների կրթության նախարարների նախաձեռնությամբ կազմակերպված՝ Ասկերանի շրջանի Պատարա գյուղի մոտ տեղակայված ճամբարում, որը նախատեսված էր երկու հանրապետությունների բոլոր մարզերի ավագ դպրոցների մի քանի տասնյակ

---

13 «PARA TV» հեռուստատեսության մեդիա նախագիծ, «Ադրբեջանը տակտիկական քայլեր է անում. Արցախի ՄԻՊ», 29 սեպտեմբերի, 2018թ., հղում՝ https://www.youtube.com/watch?v=Z7fSrZ7bZgM&list=PLBbo3o3kGIBbLYE2GZF6K7O5LOwKJWgHb&index=8, (վերջին մուտքը՝ 21 մարտի, 2019թ.):

14 «Երկիր մեդիա» հեռուստաընկերության «Երկիրն այսօր» հաղորդաշար, «Մարդու իրավունքների պաշտպանությունը՝ Արցախում. Ռուբեն Մելիքյան», 21 հունիս, 2018թ., հղում՝ https://www.youtube.com/watch?v=FIgWJsm2jzg&list=PLBbo3o3kGIBbLYE2GZF6K7O5LOwKJWgHb&index=13, (վերջին մուտքը՝ 21 մարտի, 2019թ.):

15 «Artsakhtimes» լրատվական, «2 տարի անց 100 ժամ տևած պատերազմից Спустя два года после войны, продолжавшейся 100 часов», 2 ապրիլի, 2018թ., հղում՝ http://artsakhtimes.am/2-տարի-անց-100-ժամ-տևած-պատերազմից/?fbclid=IwAR323KCWhtQz6yNY0QPtN7aaPoXn0vKopf7F8eBEPG0PoNduGD4IkYikZPA 5:26 րոպեից, (վերջին մուտքը՝ 21 մարտի, 2019թ.):

16 «Ազատություն» ռադիոկայանի «Ֆեսբուքյան ասուլիս», «ԼՂ օմբուդսման Ռուբեն Մելիքյանի հետ», 3 ապրիլի, 2018թ., հղում՝ https://www.azatutyun.am/a/29142478.html?fbclid=IwAR1pXCGb_7IaV6AVPGwkJd4nN9kpNsslWhX99wTq8qFaAUTDWOtMLSWIJFQ , (վերջին մուտքը՝ 25 մարտի, 2019թ.):

աշակերտների համար[17]: Ճամբարականների հետ հանդիպմանը Պաշտպանն անդրադարձել է մարդու իրավունքների արժեքաբանությանն ու էությանը, Պաշտպանի հաստատության նշանակությանը, ինչպես նաև կարևորել է մարդու իրավունքների ուսուցումը՝ որպես լավ քաղաքացիներ դառնալու նախապայման: Պաշտպանը կարևորել է ճամբարի գաղափարն ու ձևաչափը՝ նշելով, որ այն կարող է լավ օրինակ ծառայել այլ քաղաքներում ու գյուղերում բնակվող հասակակիցներին դեռևս դպրոցական տարիքից ճանաչելու և ընկերանալու համար: Նրա խոսքով՝ այդ շփումները բնականորեն կնպաստեն հանդուրժողականության ու համերաշխության մթնոլորտի խորացմանը:

4.5. Պաշտպանը՝ ԱՀ Սահմանադրության և մարդու իրավունքների միջազգային օրվա կապակցությամբ, հանդիպում է ունեցել տեխնոլոգիական համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ[18]: Պաշտպանը ներկայացրել է ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությունը, հիմնական դրույթներն ու կարևորությունը, խոսել է Արցախում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ընդհանուր վիճակի մասին:

4.6. Կարևորելով Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության մատչելիությունն ու հասանելիությունը՝ Պաշտպանը և Աշխատակազմի աշխատակիցները կատարել են շրջանային այցեր՝ տեղում կազմակերպելով քաղաքացիների ընդունելություններ: Հանդիպումների ժամանակ քաղաքացիներին տրամադրվել է իրավական խորհրդատվություն, իսկ կոնկրետ դեպքերով վերցվել են դիմումներ:

4.7. Պաշտպանը հայտարարել է լուսանկարների և տեսանյութերի մրցույթ՝ «Մարդու իրավունքներն իմ աչքերով» խորագրով՝ նվիրված ԱՀ Սահմանադրության

---

17 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանը հյուրընկալվել է Պատարա գյուղի մոտ տեղակայված դպրոցական ճամբարում», 16 օգոստոսի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=118 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

18 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի այցը Շուշիի տեխնոլոգիական համալսարան», 11 դեկտեմբերի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=131 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

12-րդ և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 70-րդ տարեդարձերին: Մրցույթն անց է կացվել Թուֆենկյան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ Ջուտիթ և Վիկտոր Սարյանների հովանավորությամբ: Մրցույթին կարող էին մասնակցել Արցախի դպրոցների բոլոր աշակերտները: Լուսանկարները և տեսանյութերը պետք է վերաբերեին մարդու իրավունքներին, իսկ թե կոնկրետ ինչ իրավունքի և ինչպիսի դրսևորմամբ՝ թողնվում էր հեղինակի հայեցողությանն ու ստեղծագործականությանը: Լուսանկարներն և տեսանյութերը տեղադրվել են ՄԻՊ ֆեյսբուքյան պաշտոնական էջում: Ֆեյսբուքյան էջում տեղադրված ամենաշատ հավանում ստացած 5-ական լուսանկարներն ու տեսանյութերն անցել են երկրորդ փուլ:

Երկրորդ փուլում ստեղծվել է մրցութային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են մի խումբ հանրային գործիչներ Արցախի ու Հայաստանի Հանրապետություններից և Սփյուռքից՝ ԱՀ Մարդու իրավունքների երկրորդ պաշտպան Ռուբեն Մելիքյանի գլխավորությամբ: Մրցութային հանձնաժողովի գնահատականների հիման վրա՝ 2018թ. դեկտեմբերի 10-ին ամփոփվել են մրցույթի արդյունքները՝ լուսանկարների ու տեսանյութերի անվանակարգերում հաղթած մասնակիցներին տրամադրելով նախատեսված մրցանակները:

Բաժին 5. Պաշտպանի համագործակցությունը քաղաքացիական հասարակության հաստատությունների հետ

5.1. Քաղաքացիական հասարակության մարմինների հետ հանդիպումներն ու քննարկումները շարունակական բնույթ են կրել հաշվետու տարվա ընթացքում: Բացի համագործակցությունից, Պաշտպանը նաև գործուն քայլեր է ձեռնարկել քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացման ուղղությամբ:

5.2. Պաշտպանը հանդիպել է Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի և փաստաբանական դպրոցի ունկնդիրների հետ[19]: Թե՛ Պաշտպանը և թե՛ Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը կարևորել են փաստաբանության ինստիտուտի և ՄԻՊ հաստատության ներուժի համատեղ օգտագործումը մարդու իրավունքների երաշխավորման հարցում: Պաշտպանը համառոտ ներկայացրել է ՄԻՊ 2017թ. տարեկան հաղորդման հիմնական արձանագրումները և պատրաստակամություն է հայտնել սերտորեն փոխգործակցել Արցախի փաստաբանական համայնքի հետ ինչպես մարդու իրավունքներին առնչվող խնդիրների վերհանման, դրանց լուծման առաջարկների մշակման, այնպես էլ փաստաբանության կարողությունների զարգացման, մասնագիտական փորձի փոխանակման ոլորտներում: Փաստաբանները մի շարք հարցեր են առաջադրել Մարդու իրավունքների պաշտպանին, որոնք հիմնականում վերաբերել են օրենսդրական և իրավակիրառական խնդիրներին՝ քրեական դատավարության մինչդատական և դատական փուլերում վստահորդների իրավաչափ շահերի պաշտպանության, ինչպես նաև անձանց անազատության մեջ պահման վայրերում արդյունավետ իրավաբանական օգնության տրամադրման ոլորտներում: Պաշտպանը հանձնառություն է ստանձնել իր լիազորությունների սահմաններում ուսումնասիրել ներկայացված խնդիրները, դրանց հաղթահարման միջազգային փորձը և, փաստաբանական համայնքի հետ համատեղ, մշակել ու քննարկման

19 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Ռուբեն Մելիքյանը հանդիպել է Արցախի մի խումբ փաստաբանների հետ», 10 ապրիլի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=82 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

առարկա դարձնել արձանագրված խնդիրների կարգավորման առաջարկությունները: Հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվել են շարունակել պարբերական շփումները:

5.3. Պաշտպանը կլոր սեղան-քննարկում է կազմակերպել Արցախում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության թեմայով, որին մասնակցում էին նաև ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պաշտպանն ընդգծել է, որ պետական մարմինները և քաղաքացիական հասարակությունը պետք է այս բնագավառում համատեղ ջանքերով աշխատեն մեկ հիմնական նպատակի համար, այն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ստեղծել հավասար հնարավորություններ և պայմաններ ինքնուրույն իրացնելու իրենց իրավունքները:

5.4. Աշխատակազմի աշխատակիցները, «Մայրություն» հասարակական կազմակերպության հրավերով, այցելել են Մարտունի և Ասկերան քաղաքներ ու հանդիպումներ ունեցել տեղի բնակիչների հետ: Հանդիպումների ընթացքում աշխատակիցները ներկայացրել են ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության հիմնական ուղղությունները, մարդու իրավունքների ընդհանուր վիճակն Արցախում, դրանց պաշտպանության ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես նաև անդրադարձել են նոր Սահմանադրության ընդունումից հետո բնագավառում իրագործվող բարեփոխումներին[20]:

20 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «ԱՀ ՄԻՊ հաստատության ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել քաղաքացիական հասարակության հետ», 19 մարտի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=28 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

Բաժին 6. Պաշտպանի արտաքին փոխգործակցությունը

6.1. Համագործակցությունը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ

6.1.1. ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է ակտիվ համագործակցությունը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ, որի հիմնական ուղղությունները քննարկման նպատակով դիմումների փոխանցումը և փորձի փոխանակումն էին: Հաշվետու տարում ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանը քննարկման նպատակով ՀՀ իր գործընկերոջից ստացել է 7, փոխանցել 3 դիմումներ:

6.1.2. Արցախի և Հայաստանի Հանրապետությունների մարդու իրավունքների պաշտպանների համագործակցության շրջանակում Աշխատակազմի աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով տարբեր փուլերով երկշաբաթյա պրակտիկա են անցել Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում:

Արցախի ՄԻՊ աշխատակիցները, մասնավորապես, ծանոթացել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի սկզբունքներին, քաղաքացիների հետ անցկացվող առանձնազրույցների, բողոքների քննարկման առանձնահատկություններին, բողոքների հիման վրա մշակվող կանխարգելիչ աշխատանքներին, մասնավորապես՝ զեկույցների ու հաղորդումների, Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների ու հատուկ կարծիքների, օրենսդրական նախագծերի ու դրանց հիմնավորումների կազմման աշխատանքներին և այլն:

6.2. Համագործակցությունը Սփյուռքի կառույցների հետ

6.2.1. Սփյուռքի կազմակերպությունների հետ համագործակցությունը շարունակել է մնալ Պաշտպանի գործունեության առանցքում: Ամերիկայի հայ իրավաբանական միության և Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համակազմակերպմամբ՝ 2018թ. մայիսի 24-25-ը Շուշիում տեղի է ունեցել Միության 29-րդ տարեկան համաժողովը, որի ժամանակ, ի թիվս այլ

հարցերի, քննարկվել են նաև Արցախում մարդու իրավունքների պաշտպանությանն աջակցելուն ուղղված տարբեր հարցեր: Միության հետ համագործակցության արդյունքում արդեն իսկ առկա են շոշափելի ձեռքբերումներ:

6.2.2. Ամերիկայի հայ իրավաբանական միության և Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցության արդյունքում Պաշտպանի հաստատությունում փորձուսուցման ծրագիր է կազմակերպվել, որի շրջանակներում ԱՄՆ-ում կրթություն ստացող երկու հայ ուսանողներ մեկամսյա փորձուսուցում են անցել Պաշտպանի աշխատակազմում: Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ Հայ դատի գրասենյակի և «Դեպի Հայք» հասարակական կազմակերպության մեկական կամավոր ևս փորձուսուցում է անցել ԱՀ ՄԻՊ աշխատակազմում:

6.2.3. Համագործակցությունը շարունակական է եղել նաև Եվրոպայի Հայ դատի գրասենյակի հետ, որի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցը երկամսյա փորձուսում է անցել կառույցի՝ Բրյուսելում գտնվող գրասենյակում:

6.2.4. Հաշվետու տարում սերտ համագործակցություն է իրականացվել Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի հետ: 2018թ. սեպտեմբերի 25-ին հրապարակված «Հայատյացությունն Ադրբեջանում. կազմակերպված ատելության խոսքը և թշնամությունն ընդդեմ հայերի» խորագրով անգլերեն հատուկ զեկույցը մշակվել է Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի աջակցությամբ: Բացի այդ, Պաշտպանի հայտարարած լուսանկարների և տեսանյութերի մրցույթը, որը կրում էր «Մարդու իրավունքներն իմ աչքերով» խորագիրը, անց է կացվել Թուֆենկյան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ Ջուտիթ և Վիկտոր Սարյանների հովանավորությամբ (մանրամասները՝ 1.3. և 4.7. կետերում):

6.3. Միջազգային համագործակցությունը

6.3.1. 2018թ. հունվարի 26-ին Պաշտպանը հանդիպել է Եվրախորհրդարանի պատգամավոր, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Լարս

Ադակտուսսոնի գլխավորած պատվիրակությանը[21]: Հանդիպմանը մասնակցել է Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի ներկայացուցիչը: Հանդիպման ընթացքում Պաշտպանը ներկայացրել է ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության հիմնական ուղղությունները, մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր վիճակը, անդրադարձել Ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեջանի կատարած դաժանություններին, ինչպես նաև 2017թ. Սահմանադրական հանրաքվեի արդյունքում սկիզբ առած բարեփոխումներին:

6.3.2. 2018թ. օգոստոսի 30-ին Պաշտպանը հանդիպել է Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի նախագահի և հանձնախմբի գործադիր տնօրենի ուղեկցությամբ Արցախ ժամանած՝ Եվրախորհրդարանի պատգամավոր Մարտին Զոնեբորնի գլխավորած պատվիրակությանը[22]: Պաշտպանն անդրադարձ է կատարել ԱՀ ՄԻՊ հաստատության իրավական կարգավիճակին, կառուցվածքին, գործունեության առաջնահերթություններին, քաղաքացիական հասարակության և Սփյուռքի կառույցների հետ համագործակցությանը:

6.3.3. 2018թ. սեպտեմբերի 26-ին Պաշտպանը հանդիպել է Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Էլենի Թեոխարուսի գլխավորած պատվիրակության հետ[23]: Պաշտպանը ներկայացրել է Ադրբեջանում հայատյացության վերաբերյալ ԱՀ

---

21 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Ռուբեն Մելիքյանը հանդիպել է Եվրախորհրդարանի պատգամավոր, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Լարս Ադակտուսսոնի գլխավորած պատվիրակությանը», 26 հունվարի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=119 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

22 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Պաշտպանն ընդունել է ԵԽ պատգամավոր Մարտին Զոնեբորնի գլխավորած պատվիրակությանը», 30 օգոստոսի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=119 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

23 Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայք, «Ռուբեն Մելիքյանը հանդիպել է Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Էլենի Թեոխարուսի հետ», 2 հոկտեմբերի, 2018թ., հղում՝ http://ombudsnkr.am/news.php?nid=120 (վերջին մուտքը՝ 29 մարտի, 2019թ.):

ՄԻՊ հատուկ զեկույցը, ինչպես նաև Արցախում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր վիճակը:

6.3.4. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի ղեկավարը 2018թ. փետրվարի 28-ին Բրյուսելում մասնակցել է Եվրոպական խորհրդարանում Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված համաժողովին, որը կրում էր «Լեռնային Ղարաբաղը և Եվրոպական Միությունը 1988-2018թթ.» խորագիրը: Միջոցառումը նպատակ ուներ խրախուսել եվրոպական հաստատություններին ավելի ակտիվ դերակատարություն ունենալ տարածաշրջանային գործընթացներում և մարդու իրավունքների պաշտպանության հարցերում: Համաժողովը կազմակերպվել էր Հայաստանի եվրոպացի բարեկամներ կազմակերպության և Հայկական բարեգործական ընդհանուր միության Եվրոպայի գրասենյակի համատեղ ջանքերով՝ Եվրոպական խորհրդարանի պատգամավոր, Եվրախորհրդարանում Արցախի հետ բարեկամության խմբի ղեկավար Ֆրանկ Էնգելի աջակցությամբ:

Եզրափակիչ նկատառումներ

Սույն հաղորդման մեջ Պաշտպանը ներկայացրել է 2018թ. իր գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին համապատասխան տեղեկություններ: Ներկայացնելով գործունեության հիմնական արդյունքները՝ Պաշտպանը նաև իրավասու մարմինների ուշադրությունն է հրավիրել ԱՀ օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առկա որոշակի խնդիրների վրա՝ միևնույն ժամանակ առաջ քաշելով կոնկրետ առաջարկներ դրանց լուծման ուղղությամբ: Վերհանված խնդիրները վերաբերել են հիմնականում սոցիալական ապահովության, սեփականության, առողջության պահպանման, արդար դատաքննության, ազատ տեղաշարժի, ազատ արտահայտվելու, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, ազատազրկված անձանց և մի շարք այլ իրավունքների: Այդ խնդիրների լուծման նպատակով Պաշտպանն իր պատրաստակամությունն է հայտնում հնարավորինս աջակցել պետական լիազոր մարմիններին ներդնելու և կիրառելու համապատասխան իրավակարգավորումներ՝ երաշխավորելու համար մարդու իրավունքների ու ազատությունների պատշաճ պաշտպանությունը:

Պաշտպանը բարձրաձայնում է այնպիսի միջազգային իրավական փաստաթղթերին միանալու անհրաժեշտության մասին, ինչպիսիք են Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան (10 դեկտեմբերի, 1984թ.), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (20 նոյեմբերի, 1989թ.), Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (13 դեկտեմբերի, 2006թ.): Այդ կոնվենցիաներին միանալը համակարգային հիմք կստեղծի նշված ոլորտների խորքային բարեփոխումների համար՝ ապահովելով և՛ հետազոտական, և՛ օրենսդրական, և՛ կիրառական գործիքակազմեր Մարդու իրավունքների պաշտպանի, պետական լիազոր մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության համար:

Պաշտպանը շարունակական ուշադրության ներքո է պահելու Օրենքով իրեն վերապահված մշտադիտարկման գործառույթի իրացումը՝ թե՛ փակ ու կիսափակ հաստատություններում, թե՛ ուսումնական կառույցներում և թե՛ հնարավոր այլ վայրերում՝ հետևելու դրանցում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացիկ վիճակին: Պաշտպանը մտադիր է խորքային հետազոտություններ կատարել կոնկրետ ոլորտներում՝ համակողմանիորեն վերհանելու մարդու իրավունքներին առնչվող առկա խնդիրներն ու դրանց պատճառները, ինչպես նաև պետական լիազոր մարմիններին առաջարկելու հնարավոր լուծումներ:

Իր գործառույթների արդյունավետ իրացման գործում Պաշտպանն ընդգծում է ոչ միայն պետական մարմինների, այլ նաև քաղաքացիական հասարակության հաստատությունների հետ ակտիվ համագործակցության կարևորությունը: Այդ առումով, Պաշտպանը շեշտադրում է քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացման ուղղությամբ պետության շարունակական և արդյունավետ աջակցության անհրաժեշտությունը, ինչը դրական կերպով կանդրադառնա մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում հանրային վերահսկողության ու ներառականության վրա: Պաշտպանը հայտնում է իր հանձնառությունը հնարավորինս աջակցելու քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացման գործընթացին:

Ընդգծելով մարդու իրավունքների վերաբերյալ հասարակության պատշաճ իրազեկվածության ու իրավագիտակցության նշանակությունը՝ Պաշտպանը գործուն քայլեր է ձեռնարկելու այդ ուղղությամբ շոշափելի արդյունքներ արձանագրելու նպատակով: Մասնավորապես, զանգվածային լրատվամիջոցների նպատակային կիրառումը, թեմատիկ մրցույթների, կենդանի հանդիպումների և իրազեկման տարբեր արշավների պարբերական կազմակերպումը լինելու են Պաշտպանի գործունեության առանցքում:

Պաշտպանն ուշադրություն է դարձնելու Օրենքով իրեն վերապահված իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված լիազորությանը՝ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող

նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավասու մարմիններին գրավոր կարծիք ներկայացնելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով ԱՀ Գերագույն դատարան դիմելու միջոցով:

Կարևորելով Հանրապետությունում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի շարունակական և համակողմանի բարելավումը պետության կողմից՝ Պաշտպանն ընդգծում է այդ ուղղությամբ համակարգային մեխանիզմների ու քայլերի մշակման և կիրառման անհրաժեշտությունը: Այդ տեսանկյունից, Պաշտպանը վերահաստատում է նախորդ տարեկան հաղորդման մեջ ստանձնած հանձնառությունն աջակցելու մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության մշակման ու գործարկման աշխատանքներին:

Պաշտպանը շեշտադրում է, որ առաջիկայում շարունակական է լինելու Ադրբեջանի կողմից տարվող հայատյացության քաղաքականությունը մշտադիտարկման ենթարկելու և արձանագրված փաստերը միջազգայնացնելու պրակտիկան: Այս առումով շարունակում է խնդրահարույց մնալ միջազգային իրավապաշտպան հանրության բացակայությունն Արցախում, և Պաշտպանը շարունակելու է ջանքեր գործադրել այդ խնդրի լուծման ուղղությամբ: